Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի նիստում, արձանագրություն N 4,
գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի պաշտոնակատար
Դ. Ռ. Գալոյան
18 դեկտեմբերի 2019 թ.

ԿԱՐԳ
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ, ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը մշակվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգի, «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի, «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների վերականգնման, ներքին տեղափողության, առարկայական (ծրագրային) տարբերությունների հանձնման և ուսման վճարի հաշվարկման» ընթացակարգի, «Վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության

և գնահատման» կարգի, «Ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման» կանոնակարգի, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում «Էրազմուս +» ծրագրի շրջանակներում շարժունության իրականացման» կարգի, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամփոփիչ ատեստավորման գնահատականի քննարկման և բողոքարկման» կարգի, «Ավարտական աշխատանքների կատարման և պաշտպանության» մեթոդական ցուցումների հիման վրա:

2. «Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգի» նպատակն է ուսումնառության և գիտելիքի գնահատման գործընթացներում ուսանող-համալսարան հարաբերությունների կարգավորումը և ուսանողների գիտելիքի ստուգման մեխանիզմների միասնական համակարգի սահմանումը:
3. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (այսուհետ՝ համալսարան) բակալավրական կրթական ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսանողին համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:
4. Ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը հեռակա ուսուցման մեկ ուսումնական տարում 48 ԵԿՓՀ (ECTS) կրեդիտ է, մեկ կիսամյակում՝ 24 կրեդիտ:
5. Բակալավրական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում 1-4-րդ ուսումնական տարիներին երկու կիսամյակների միջև թույլատրվում է կրեդիտների գումարի մինչև 10% շեղում՝ ուսումնական տարվա հանրագումարը պահպանելով 48 ԵԿՓՀ (ECTS) կրեդիտ:
6. Մեկ ԵԿՓՀ (ECTS) կրեդիտը համարժեք է 30 ժամյա ուսումնական բեռնվածությանը (ներառյալ՝ ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը):

7. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է (ներառյալ՝ ինքնուրույն արտալսարանային աշխատանքը), որը համարժեք է 1,5 կրեդիտի:
8. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կարող է կազմել 23-30 ժամ:
9. Կրթական ծրագրի բոլոր բաղադրիչների համար սահմանվում են կրեդիտներ, որոնք արտահայտում են ուսանողին ներկայացվող լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքի ուսումնական լրիվ բեռնվածությունը: Կրեդիտների սահմանման հիմքը կրթական ծրագրի որևէ բաղադրիչի յուրացման բարդությունն է (ուսանողի կողմից դրա յուրացման համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը):
10. Ուսանողը վաստակում է սահմանված կրեդիտը կրթական ծրագրի համապատասխան բաղադրիչի վերջնարդյունքները հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմ ապահովելու դեպքում:
11. Կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը:
12. Ընթացիկ ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ բուհի կողմից սահմանված կարգով և ժամկետներում ևս երկու անգամ վերահանձնելով համապատասխան առարկայական դասընթացները, որոնց ցանկը հաստատում է բուհը՝ հաշվի առնելով առարկաների շարունակականության սկզբունքը, ըստ ուսումնական պլանի: 12 կրեդիտ ակադեմիական պարտքը(երը) վերահանձնելու հնարավորություն է (են) տրվում այն կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, երբ առաջացել է (են) այդ պարտքը(երը):
13. Համալսարանում ուսանողի գիտելիքների գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով:

14. Բակալավրիատի կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների գիտելիքը գնահատվում է ըստ առանձին բաղադրիչների, որոնք են՝ դասընթացները, փորձառությունը և ավարտական աշխատանքը:
15. Կրթական ծրագրի առանձին բաղադրիչների գծով ուսանողի գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում տվյալ բաղադրիչի անհատական ծրագրով սահմանված, գնահատման տարբեր գործոնների և դրանց կշիռների հիման վրա, ինչը կարգավորվում է սույն կարգով նախատեսված N 5 հավելվածում ներկայացված գործոններով և գնահատականներով:
16. Գնահատումն իրականացվում է 20 միավորային համակարգով: Գնահատման 20 միավորային համակարգը համալսարանում նախկինում կիրառված 5 և 100 միավորային համակարգերի հետ համապատասխանեցման համար որպես ուղեցույց է ծառայում N 4 հավելվածը:
17. Կիսամյակի ուսումնական պարապմունքները կազմակերպվում են 4 շաբաթվա ընթացքում:
18. Քննաշրջանը կազմակերպվում է ուսումնական կիսամյակի 17-20-րդ շաբաթների ընթացքում:
19. Միևնույն խմբում նույն օրը գիտելիքի երկու քննական ստուգում չի թույլատրվում:
20. Քննաշրջանից հետո ձևավորվում է ուսանողի գիտելիքի գնահատման վերջնական հաշվարկային գնահատականը և դրական շեմը չհաղթահարած ուսանողների համար կազմակերպվում է 2 վերահանձնում:

II. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Համալսարանի հեռակա ուսուցմամբ բակալավրիատի ուսանողներն իրավունք ունեն.

1) մասնակցելու իրենց կրթության բովադակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների, ավարտական աշխատանքի թեմայի ընտրությանը)՝

պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,

2) տեղեկացված լինելու գիտելիքի գնահատման մեխանիզմներին,

3) մասնակցելու կառավարման համապատասխան մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բուհի կանոնադրությամբ,

4) մասնակցելու կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի որակի և գիտամանկավարժական կազմի գնահատման գործընթացներին՝ համալսարանում գործող կարգին համապատասխան,

5) անվճար օգտվելու համալսարանի գրադարանից, ընթերցասրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

6) մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և սեմինարներին,

7) բողոքարկելու համալսարանի ղեկավարության՝ ուսումնական գործընթացին վերաբերող հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

8) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու Համալսարանի, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից նշանակվող կրթաթոշակի (ներառյալ՝ անվանական), դրամաշնորհի ստացման մրցույթներին,

9) ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և այլ նորմատիվ փաստաթղթերի,

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով,

11) ընդհատելու ուսումը և զորակոչվելու բանակ, իսկ զորացրվելուց հետո, ձմեռային զորակոչի դեպքում երկու ամսվա ընթացքում և ամառային զորակոչի դեպքում երեք ամսվա ընթաքում ներկայացնելու դիմում՝ ուսանողական իրավունքները վերականգնելու համար,

12) ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում նվազագույնը 7 շաբաթ ընդհանուր տևողությամբ,
13) ցանկության դեպքում սահմանած կարգով ստանալու բնակատեղ հանրակացարանում,
14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ տեղափոխվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները,
15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և համալսարանում սահմանված կարգին համապատասխան՝ համալսարանի մի կրթական ծրագրից տեղափոխվել մեկ այլ կրթական ծրագիր՝ պահպանելով նախորդ կրթական ծրագրում կուտակած կրեդիտների քանակը,
16) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային շարժունության ծրագրերի պայմաններին համապատասխան՝ միջհամալսարանական պայմանագրերի շրջանակներում մեկ կիսամյակ ուսումնառելու համալսարանի գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատություններում,
17) ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալ բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի սահմանած կարգով,
18) կրթությունը դադարեցրած նախկին ուսանողը, անկախ դադարեցման պատճառից, իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակում կրթության դադարեցման,
19) մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,
20) ուսանողական կյանքին առնչվող հարցերի լուծման համար ստեղծելու ուսանողական հասարակական կազմակերպություններ,
21) օգտվել ուսման տարեկան վարձի՝ մասնակի փոխհատուցման իրավունքից՝

ա. սոցիալապես անապահով կամ սահմանամերձ բնակավայրի բնակիչ ուսանողներին պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի համապատասխան փոխհատուցում տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

բ. առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով համալսարան ընդունված ուսանողներին: Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստ տրվում է նախորդ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին՝ մրցութային հիմունքներով,

գ. ուսանողի բարձր առաջադիմության և սոցիալական վիճակի արդյունքների հաշվառմամբ, նախորդ կիսամյակի արդյունքների հիման վրա, համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում (զեղչ) տրամադրելու չափանիշներն ու կարգը սահմանված են «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգով»,

22) հրամանագրվելուց հետո անվճար ստանալ ՀՊՏՀ նույնականացման քարտ (ASUE ID CARD), որն ապահովում է մուտքն ու ելքը համալսարան և թույլ է տալիս օգտվելու գրադարանի ծառայություններից և համալսարանի ենթակառուցվածքներից: ՀՊՏՀ նույնականացման քարտը կորցնելու կամ վնասելու դեպքում տրվում է նոր քարտ՝ վճարովի հիմունքներով:

22. Համալսարանի ուսանողները պարտավոր են.

1) համալսարանի հետ կնքելու ուսումնառության պայմանների մասին պայմանագիր,

2) սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,

3) տիրապետել կրթական ծրագրի վերջնարդյունքներով նախատեսված գիտելիքին, կարողություններին և հմտություններին,

4) պահպանել համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունները,

5) կատարել համալսարանի ներքին կարգապահական կանոնների և ներքին իրավական ակտերի պահանջները,

6) հաճախել դասախոսություններին, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներին և մասնակցել փորձառությանը,

7) կատարել կրթական ծրագրում և դրա առանձին բաղադրիչների ծրագրերում ուսումնառությանը ներկայացվող պահանջները,

8) կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչները կատարելիս պահպանել՝ համալսարանում գործող կարգերում հետազոտական էթիկային, բարեվարքությանը և ակադեմիական ազնվությանը ներկայացվող պահանջները,

9) խնամքով վերաբերվել համալսարանի սեփականությանը (գույք, գրքեր, ուսումնական ձեռնարկներ, սարքավորումներ և այլն),

10) պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերը,

11) ինքնուրույն ծանոթանալ ուսումնառության հետ կապված բոլոր փաստաթղթերին (քննագրաֆիկներ, ժամանակացույցեր, տարբեր փաստաթղթերի ներկայացման ժամկետներ, փոխատեղման հրամաններ, ուսման վարձի զեղչի պայմաններ և այլն) համալսարանի տեղեկատվության տարածման համապատասխան միջոցներից (բուհի կայքէջ, ֆակուլտետի հայտարարությունների ցուցափեղկ),

12) ժամանակին վճարել սահմանված ուսման վարձը (վճարովի հիմունքներով կրթություն ստացող ուսանողները)՝

ա. ուսանողը ուսման վարձը վճարում է իր հայեցողությամբ՝ կամ ամբողջությամբ կիսամյակի սկզբում կամ ամսական վճարմամբ,

բ. ամսական սկզբունքով ուսման վարձը վճարվում է յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվա 05-ը (հինգը)՝ ուսման վարձը հավասարաչափ բաժանելով տվյալ ուսումնական տարվա ամիսների թվին՝ բացառելով ամենամյա արձակուրդի ամիսները,

գ. ուսանողը կիսամյակի ուսման վարձը պարտավոր է մարել նախքան քննաշրջանի սկիզբը,

դ. հինգերորդ կուրսի ուսանողները ուսման վարձը պարտավոր են վճարել ոչ ուշ, քան փորձաշրջանի պաշտպանության օրը,

ե. առաջին կուրսի ուսանողները առաջին կուրսի առաջին կիսամյակի վարձի առնվազն 1/2-ը վճարում են ուսումնառությունը սկսելուց առավելագույնը 15 (տասնհինգ) օրվա ընթացքում, իսկ մնացած մասը՝ մինչև քննաշրջանի սկիզբը:

զ. Սահմանված ժամկետում և սահմանված չափով վճարում չկատարելու դեպքում ուսանողը չի հրամանագրվում որպես համալսարանի ուսանող,

զա. բացառիկ դեպքերում ռեկտորատը կարող է քննարկել և երկարաձգել կիսամյակի ուսման վարձը կամ դրա առնվազն 1/2-րդ մասը գանձելու ժամկետը,

զբ. բացառիկ դեպքերում ռեկտորատը կարող է քննարկել և պայմանական կերպով հրամանագրել ուսման վարձը (կամ առնվազն դրա 1/2-րդ մասը) ուսումնառության առաջին 15 օրերին չվճարած ուսանողին՝ ըստ բուհի հետ կազմված վճարման առանձին ժամանակացույցի և ուսանողի պարտավորագրի,

է. կիսամյակի համար նախատեսված ուսման վարձը մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը չմարած ուսանողը կարող է հեռացվել համալսարանից,

ը. ուսման վարձը կայուն է ուսումնառության պայմանագրով նախատեսված ուսուցման ձևի ողջ ժամանակահատվածի համար՝ ըստ կուրսերի անընդհատ ուսումնառության դեպքում,

թ. կիսամյակում վճարված ուսման վարձը չի վերադարձվում, բացառությամբ առողջական վիճակի պատճառով ուսումն ընդհատելու դեպքի: Վերադարձման ենթակա գումարը պետք է համապատասխանի ուսուցում չանցած ժամկետին,

ժ. եթե վճարովի հիմունքներով սովորողը հեռացվել է ուսման վարձը չմուծելու պատճառով, ապա վերականգնման ժամանակ մինչև հրամանագրվելը պետք

է վճարի և՛ նախկինում հաշվեգրված պարտքը, և՛ տվյալ կիսամյակի համար նախատեսված ուսման վարձն ամբողջությամբ կամ մեկ ամսվա վարձը,

ի. ուսանողի՝ ավելի վճարած ուսման վարձը, իբրև կանխավճար, փոխանցվում է որպես հաջորդ կիսամյակի (և կամ կուրսի) ուսման վարձ, իսկ ավարտական կուրսում՝ վերադարձվում,

լ. ուսանողն ուսման վարձը վճարելուց հետո դրա մասին պարտավոր է տեղեկացնել դեկանատ՝ ներկայացնելով վճարման մասին հավաստող համապատասխան փաստաթուղթ,

լա. պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված և իր մասնագիտությամբ վերականգնվող ուսանողի ուսման վարձի չափը չի փոխվում, այսինքն՝ մնում է զորակոչվելու պահին գործող վարձաչափը,

լբ. պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված և իր կամքից անկախ տվյալ մասնագիտությունը չլինելու պատճառով այլ մասնագիտությամբ վերականգնող ուսանողի ուսման վարձը սահմանվում է զորակոչման պահին տվյալ մասնագիտության համար գործող ուսման վարձի չափով: Իսկ մասնագիտության առկայության դեպքում մասնագիտությունը փոխելու պարագայում ուսանողի ուսման վարձը սահմանվում է իր նախընտրած մասնագիտության տվյալ ուսումնական տարվա (վերականգնվող ուսումնական տարվա) ընդունելությամբ սահմանված ուսման վարձի չափով,

լգ. ուսման վարձը վճարվում է փոխանցման կարգով՝ կենտրոնական գանձապետարանում բացված գանձապետական հաշվին:

III. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒԺԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ, ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

23. Ուսանողների բարձր առաջադիմության, գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցության համար համալսարանում սահմանված են հետևյալ խրախուսանքները.

1) շնորհակալության հայտարարում,

2) պատվոգրի շնորհում,

3) հուշանվերով պարգևատրում,

4) միանվագ դրամական պարգևատրում,

ա. ուսանողին խրախուսանք տրվում է ռեկտորի հրամանով, ինչի մասին ուսանողները տեղեկացվում են համալսարանի՝ տեղեկատվության տարածման միջոցներից,

բ. խրախուսանքի մասին հրամանի քաղվածքը պահվում է ուսանողի անձնական գործում:

24. Ուսումնական պլանները չկատարող, ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերող, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, համալսարանի կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները խախտող ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ համալսարանից հեռացնելը.

1) ուսանողների նկատմամբ կարգապահական տույժերի կիրառումն իրականացվում է ռեկտորատի որոշմամբ և ռեկտորի կամ նրա լիազորած անձի հրամանով,

2) կարգապահական տույժերը կիրառվում են զանցանքի հայտնաբերման պահից: Եթե ուսանողը մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական տույժի չի ենթարկվում, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

25. Ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն,

2) խիստ նկատողություն

3) համալսարանից հեռացում:

26. Համալսարանի սեփականություն համարվող գույքին պատճառած վնասի համար ուսանողը կրում է նյութական պատասխանատվություն գործող օրենսդրությանը համապատասխան.

1) ուսանողներն իրավունք չունեն, առանց համալսարանի ղեկավարության թույլտվության, լաբորատորիաներից և ուսումնական շենքերից դուրս հանել համալսարանին պատկանող գույքը և սարքավորումները:

27. Ուսանողը հեռացվում է բուհից.

1) անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում,

2) բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում,

3) բուհի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում,

4) կիսամյակի ընթացքում պարապմունքների 25%-ից ցածր հաճախումներ ունենալու և ամփոփիչ ստուգմանը չներկայանալու դեպքում:

28. Արգելվում է ուսանողներին բուհից հեռացնել հիվանդության, ակադեմիական, հղիության ու ծննդաբերության և այլ արձակուրդների ընթացքում:

29. Ուսանողն ազատվում է բուհից.

1) իր դիմումի համաձայն,

2) այլ բուհ տեղափոխվելու դեպքում:

30. Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է.

1) ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,

2) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում,

3) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի դեպքերում:

IV. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

31. Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են հաստատված ուսումնական պլաններին և ծրագրերին համապատասխան:

32. Դասացուցակը կազմվում է կիսամյակի համար և հրապարակվում է կիսամյակի պարապմունքների մեկնարկից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր առաջ:
33. Համալսարանում մեկ դասի տևողությունը 80 րոպե է: Ուսումնական պարապմունքների մեկնարկի և ավարտի մասին ուսանողները տեղեկացվում են ազդանշանով: Պարապմունքների ակադեմիական ժամի ավարտից հետո սահմանված է ընդմիջում՝ 10 րոպե տևողությամբ:
34. Պարապմունքի սկիզբն ազդարարող ազդանշանից հետո ուսանողի մուտքը լսարան, մինչև ընդմիջումը, առանց դասախոսի թույլտվության, արգելվում է: Պարապմունքների բնականոն անցկացման համար բոլոր ուսումնական և կից տարածքներում արգելվում է պարապմունքների համար նախատեսված ժամերին աղմկելը:
35. Լսարաններում, լաբորատորիաներում գործնական պարապմունքներ անցկացնելու համար յուրաքանչյուր կուրս բաժանվում է խմբերի և ենթախմբերի:
36. Յուրաքանչյուր խմբում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից ընտրվում է ավագ, ով անմիջաբար ենթարկվում է ֆակուլտետի դեկանին, իր խմբին տեղեկացնում է նրա բոլոր կարգադրությունների ու ցուցումների մասին:
37. Յուրաքանչյուր խմբի համար լրացվում Է մատյան: Դասախոսը պարտավոր է ամեն դասին անձամբ գրանցումներ կատարել մատյանում:
38. Արգելվում է պարապմունքների ժամանակ, առանց դասախոսի թույլտվության, էլեկտրոնային սարքեր և բջջային հեռախոսներ օգտագործելը:

V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

39. Համալսարանի կրթական ծրագրերը բաղկացած են պարտադիր և ընտրովի դասընթացներից:

40. Կրթական ծրագրերում ներառված դասընթացների պարտադիր կամ ընտրովի լինելը որոշվում է կրթական ծրագրով:
41. Կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառված դասընթացները ենթակա չեն փոփոխման՝ կրթական ծրագիրն ուսումնառող տվյալ կուրսի համար: Բացառիկ դեպքերում, կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի ներկայացրած հիմնավորումներին և գիտական խորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովի դրական եզրակացությանը հավանություն տալու դեպքում, գիտական խորհրդի որոշմամբ կրթական ծրագրում ներառված որոշ դասընթացներ (ոչ ավելի, քան տվյալ կիսամյակում նախատեսված դասընթացների 10%-ը) կարող են փոխարինվել կրթական ծրագրի միևնույն վերջնարդյունքի ձևավորմանը ծառայող համարժեք դասընթացներով: Փոփոխությունները կատարվում են մինչև նախորդ ուսումնական տարվա մայիսի 1-ը ներառյալ:
42. Կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառված յուրաքանչյուր ընտրովի դասընթաց մատուցվում է մեկ կիսամյակի ընթացքում:
43. Եթե կրթական ծրագրի ուսումնական պլանում տվյալ ուսումնական տարվա համապատասխան կիսամյակում նախատեսվել է մեկ ընտրովի դասընթաց, ապա ուսանողներին պետք է առաջարկվեն առնվազն երկու ընտրովի դասընթաց, երկուսի դեպքում՝ առնվազն երեք, երեքի դեպքում՝ առնվազն չորս և այդպես շարունակ (առնվազն մեկ դասընթաց ավելի սկզբունքով):
44. Կրթական ծրագրի առաջին կուրսում ուսանողներին ընտրովի դասընթացներ չեն առաջարկվում:
45. Յուրաքանչյուր ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի պարապմունքների առաջին երկու շաբաթների ընթացքում ուսանողները մանրամասնորեն տեղեկացվում են հաջորդ ուսումնական տարվա ընտրովի դասընթացների ծրագրերին, համառոտագրերի բովանդակությանը և ընտրության պայմաններին (ներկայացված դասընթացներից քանիսը պետք է ընտրվի):
46. Դասընթացների ընտրությունը կազմակերպում են համալսարանի ուսումնական գործընթացի կազմակերպման բաժինը, դեկանատը և կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնը(ները) համատեղ:

47. Դասընթացների ընտրությունից առաջ կազմակերպվում է ակադեմիական խմբի առնվազն մեկ հանդիպում ընտրովի դասընթացները դասավանդող ամբիոնների վարիչների հետ, որի ընթացքում վերջիններս ներկայացնում են դասընթացը, դասավանդման սկզբունքները և դասընթացով ակնկալվող վերջնարդյունքները:
48. Ըստ ընտրովի դասընթացների՝ ուսանողների գրանցումը կատարվում է տեղեկատվությունը նրանց տրամադրելուց հետո՝ մինչև կիսամյակի պարապմունքների 4-րդ շաբաթվա ավարտը, բայց ոչ ուշ քան մայիսի 1-ը:
49. Տվյալ ընտրովի դասընթացը համարվում է կայացած, եթե գրանցվել է առնվազն 25 ուսանող: Եթե ակադեմիական խմբի ուսանողների թիվը փոքր է կամ հավասար է 25-ի, ապա դասընթացը համարվում է կայացած, եթե գրանցվել է տվյալ ակադեմիական խմբի ուսանողների ընդհանուր թվի առնվազն կեսից ավելին, իսկ տվյալ դասընթացին գրանցված փոքրաթիվ ուսանողներին առաջարկվում է միանալ որևէ կայացած խմբի:

VI. ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

50. Գնահատման առումով դասընթացները լինում են՝ տարբերակված գնահատումով (որի դեպքում գնահատումները կատարվում են թվային և տառային նշագրումով) և ստուգարքով գնահատվող (որի դեպքում դասընթացը գնահատվում է «ստուգված/չստուգված» սկզբունքով):
51. Ուսանողի գիտելիքի գնահատումը կատարվում է ըստ սահմանված ժամանակացույցի: Ստուգարքով ավարտվող դասընթացների դեպքում գիտելիքը գնահատվում է ստուգարքի, իսկ քննությամբ ավարտվող դասընթացների դեպքում՝ քննության ընթացքում:
52. Դասախոսը դասընթացը սկսելիս պարտավոր է ուսանողներին ներկայացնել տվյալ դասընթացի առարկայական ծրագիրը, գիտելիքի ստուգման հարցաշարը, թեմաների ուսամնասիրելու ժամանակացույցը, գնահատման չափանիշները և գիտելիքի ստուգման և անցկացման կարգը:

53. Կիսամյակի քննաշրջանից հետո յուրաքանչյուր դասընթացի համար հաշվարկվում է ուսանողի վերջնական գնահատականը:
54. Ինչպես քննությամբ, այնպես էլ ստուգարքով ավարտվող դասընթացների համար հաշվարկային գնահատականը նույնացվում է տառային նիշով՝ սույն կարգի N 5 հավելվածում սահմանված սկզբունքներով:
55. Յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում ուսանողի վերջնական գնահատականը ձևավորվում է գնահատման սահմանված գործոնների և դրանց միավորների հանրագումարի հիման վրա:
56. Դասընթացի անհրաժեշտ կրեդիտները ստանալու համար ուսանողը գիտելիքի բազմագործոնային գնահատման համակարգի 20 միավորային սանդղակով պետք է գնահատման գործոնների հանրագումարում հավաքի առնվազն 8 միավոր:
57. Քննությամբ ավարտվող դասընթացների դեպքում գիտելիքի գնահատումն իրականացվում է ըստ անհատական աշխատանքի և քննության գործոններով ուսանողի ստացած գնահատականների հանրագումարի, որի կշիռները սահմանված են սույն կարգի N 5 հավելվածում:
58. Ստուգարքով ավարտվող դասընթացների դեպքում գիտելիքի գնահատումն իրականացվում է ըստ ստուգման արդյունքում ուսանողի ստացած գնահատականի, որի միջակայքը սահմանված է սույն կարգի N 5 հավելվածում:
59. Բոլոր գնահատականները գրանցվում են ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ:
60. Ուսանողների հաճախումները ուսումնական պարապմունքներին ենթակա են հաշվառման: Հաճախումների հաշվառման համար պատասխանատու է դասախոսը, նա է կատարում համապատասխան գրանցումներ մատյանում:
61. Հաճախումները հաշվառվում են դասախոսությունների, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների ժամանակ՝ համապատասխան խմբին դեկանատի կողմից հատկացված մատյաններում:
62. Դասախոսը իրավասու չէ ուսանողի բացակայությունը համարել հարգելի, մատյանում կատարել ուսանողի բացակայությունների շտկումներ:

63. Մատյանում բացակայությունների վերաբերյալ գրանցումները վերահսկում է ֆակուլտետի դեկանը: Ուսանողների ընդհանուր բացակայությունները հաշվառվում են դեկանատում:

64. Կիսամյակի ընթացքում պարապմունքներին 25 տոկոսից ցածր հաճախումներ ունեցող և քննությանը կամ ստուգարքին չներկայացած ուսանողները, որպես կարգապահական խախտում կատարողներ, վերահանձնումների չեն մասնակցում և հեռացվում են համալսարանից:

65. Համալսարանում, ուսանողի հաճախումները հաշվառելիս, հարգելի և անհարգելի բացակայությունները տարբերակվում են: Հարգելի են համարվում՝

ա. հիվանդության պատճառով մեկ և ավելի օր տևողությամբ բացակայությունները. այս դեպքում ուսանողը դիմումի հետ միասին, ֆակուլտետի դեկանին է ներկայացնում հիվանդության մասին քաղվածք ամբուլատոր բժշկական քարտից և դեկանն ընդունում է համապատասխան որոշումը,

բ. ռեկտորատի որոշմամբ՝ մեկ շաբաթ և ավելի տևողությամբ բացակայությունները այլ պատճառներով (ընտանեկան, գիտական, մարզամշակութային, այլ բացառիկ դեպքեր):

գ. ուսանողները ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքը դեկանին ներկայացնում են բացակայելուց հետո դասի ներկայանալուց ոչ ուշ քան 10 օրվա ընթացքում:

66. Քննությամբ ավարտվող դասընթացի վերջնական գնահատականի ձևավորման գործոն է հանդիսանում ուսանողի անհատական աշխատանքը: Անհատական աշխատանքը նախատեսված է կրթական ծրագրի հետազոտական վերջնարդյունքների ձևավորման համար:

67. Եթե դասընթացը նախատեսված է թիմային աշխատանքի և միջառարկայական թիմերում աշխատելու վերջնարդյունքների ձևավորման համար, անհատական աշխատանքը կարող է հանձնարարվել մեկից ավելի ուսանողներից բաղկացած խմբին:

68. Անհատական աշխատանքի իրականացման ընթացքում դասախոսը պարտավոր է ուսանողին կամ ուսանողների խմբին տրամադրել արտալսարանային խորհրդատվություն՝ դրա համար նախատեսված և խմբի հետ հստակեցված վայրում և ժամկետներում (կամ առցանց հաղորդակցմամբ):
69. Անհատական աշխատանքը չի կարող լինել արտագրություն կամ թարգմանություն սկզբնաղբյուրներից: Այլ ուսումնասիրություններից պարզ փոխառության, գրագողության դեպքում այն ենթակա է վերադարձման:
70. Այն դասընթացի համար, որն ուսումնասիրվում է մեկ կիսամյակից ավելի, անհատական աշխատանք կարող է հանձնարարվել միայն մեկ անգամ՝ վերջին կիսամյակի դասընթացի շրջանակներում:
71. Անհատական աշխատանքի բովանդակությանը, կատարմանը և շնորհանդեսին ներկայացվող պահանջները, գնահատման սկզբունքները, չափանիշները և պաշտպանության անցկացման կարգը սահմանվում են դասընթացի ծրագրով: Դասախոսը պարտավոր է ուսանողներին ծանոթացնել անհատական աշխատանքի կատարման և պաշտպանության պահանջներին:
72. Անհատական աշխատանքի թեմաները և տրման ձևը հաստատում է ամբիոնը: Թեմաներն ընդգրկում են տվյալ դասընթացի ծրագիրը: Անհատական աշխատանքների թեմաները չեն կարող կրկնվել նույն խմբի ուսանողների համար:
73. Անհատական աշխատանքը հանձնարարվում է պարապմունքների մեկնարկից երկու շաբաթվա ընթացքում, իրականացման ժամկետը որոշում է դասախոսը (նվազագույնը՝ մեկ ամիս, թեման հանձնարարելուց հետո):
74. Անհատական աշխատանքն իրականացվում է գրավոր (համակարգչային շարվածքով):
75. Դասախոսը գնահատում և ստորագրում է անհատական աշխատանքը՝ գրավոր (հակիրճ) հիմնավորելով նշված գնահատականը:
76. Վերոնշյալ անհրաժեշտ պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում աշխատանքը չի գնահատվում և վերադարձվում է լրամշակման: Լրամշակված

տարբերակը պետք է ներկայացվի դասախոսին և գնահատվի նախքան քննաշրջանը:

77. Անհատական աշխատանքի պաշտպանությունը պարտադիր է, հակառակ պարագայում ներկայացված, բայց չպաշտպանած աշխատանքի գնահատականը հավասար է 0-ի:
78. Տվյալ դասընթացի համար անհատական աշխատանքի գնահատականն արձանագրվում է քննաշրջանի մեկնարկից երկու շաբաթ առաջ:
79. Յուրաքանչյուր անհատական աշխատանք գնահատվում է որպես մաս վերջնական հաշվարկային գնահատականի՝ 0-8 միջակայքում: Անհատական աշխատանքի գնահատումն իրականացվում է 0,25 միավոր քայլով:
80. Դասախոսն անհատական աշխատանքի գնահատականն արձանագրում է ամփոփաթերթում:
81. Անհատական աշխատանքի գնահատականի մասին ուսանողը տեղեկացվում է պաշտպանությունից անմիջապես հետո:
82. Անհատական աշխատանքները հաշվառվում և պահպանվում են ամբիոնում՝ մինչև տվյալ կիսամյակի միջին որակական գնահատականների (ՄՈԳ) հրապարակումը:
83. Քննաշրջանի ընթացքում իրականացվում են խորհրդատվություններ և գիտելիքի ստուգումներ:
84. Գիտելիքի ստուգման քննություններն իրականացվում են բանավոր եղանակով:
85. Բանավոր քննություններն անցկացվում են հանձնաժողովներով:
86. Գիտելիքի ստուգման ժամանակ դասախոսը ստուգում է ամբողջ կիսամյակի նյութի իմացությունը:
87. Բանավոր քննության դեպքում գնահատումն իրականացվում է 1,0 միավոր քայլով:
88. Գիտելիքը ստուգվում, գնահատվում և արդյունքները գրանցվում են ամփոփաթերթում՝ ստուգումն անցկացնելու օրը:
89. Ուսանողը պարտավոր է քննության ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով (ստուգման գրքույկ, ուսանողական տոմս):

90. Նույն դասընթացի շրջանակներում գիտելիքի ստուգումն անցկացվում է նույն հարցաշարով:

91. Գնահատման վերաբերյալ վեճերը և քննական կարգի տեխնիկական խախտումները լուծվում են ռեկտորատի քննարկմամբ:

92. Բանավոր քննության բողոքարկման պարագայում դասախոսը ուսանողին տրամադրում է բողոքարկման թերթիկ (լրացնելու համար) և տեղյակ է պահում այդ մասին իր ամբիոնի վարիչին և տվյալ ֆակուլտետի դեկանին: Դասախոսը պարտավոր է քննության ժամանակ ունենալ սույն կարգի հավելված 10-ում սահմանված ձևանմուշի բողոքարկման թերթիկներ:

93. Բանավոր քննության գնահատականի վերանայման ժամանակ ուսանողը պատասխանում է նույն քննական տոմսի հարցերին՝ հանձնաժողովի ներկայությամբ, որը նախագահում է տվյալ ամբիոնի վարիչը, իսկ հանձնաժողովի անդամներ են տվյալ ֆակուլտետի դեկանը և ուսանողական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը:

94. Բողոքարկման արդյունքի վերաբերյալ կազմվում է արձանագրություն գտահատականը նույնը թողնելու, գնահատականը բարձրացնելու կամ գնահատականը իջեցնելու վերաբերյալ, որը ստորագրում են ուսանողը և հանձնաժողովի անդամները:

95. Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականն արձանագրվում է ամփոփաթերթում՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան ուղղում դեկանի կողմից:

96. Ուսանողի գիտելիքը ստուգվում է նաև կրթական ծրագրի փորձառության բաղադրիչում:

1) Փորձառությունը կազմակերպվում է ՀՀ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, գիտահետազոտական հաստատություններում և միջազգային կազմակերպությունների ՀՀ ներկայացուցչություններում:

2) Յուրաքանչյուր ուսանողի համար փորձառության վայրում նշանակվում է ղեկավար, իսկ ամբիոնի գիտամանկավարժական կազմից՝ փորձառության ղեկավար և (կամ) փորձառության ընդհանուր համակարգող:

3) Նախքան փորձառության սկիզբը յուրաքանչյուր ամբիոն, ելնելով իր մասնագիտության առանձնահատկություններից և կրթական ծրագրի բովանդակությունից, կազմում է փորձառության ծրագրեր, որոնցում ներառված առաջադրանքներով առաջնորդվում են ուսանողները:

97. Փորձառության գնահատումն իրականացվում է 20 միավորային համակարգով: Ամփոփ գնահատականը ձևավորվում է փորձառության ընթացքում, ըստ գնահատման 3 գործոնների՝ հաճախումների, ամբիոնից նշանակված ղեկավարի և հաշվետվության պաշտպանության գնահատականների և դրանց կշիռների՝ սույն կարգի N 5 հավելվածում բերված գնահատականներին համապատասխան:

98. Փորձառության գնահատականը գրանցվում է սույն կարգի N 3 հավելվածում սահմանված ձևանմուշով փորձառության ամփոփաթերթում:

99. Փորձառության հաշվետվության պաշտպանությունը կազմակերպում է ամբիոնի նիստով հաստատված հանձնաժողովը:

100. Փորձառությունը համարվում է չհանձնած, եթե՝ փորձառության ամփոփ գումարային գնահատականը փոքր է 8-ից, ուսանողի փորձառության հաճախումները պակաս են 40%-ից, սահմանված ժամկետներում ուսանողը չի ներկայացրել փորձառության հաշվետվություն, ուսանողը չի ներկայացել փորձառության հաշվետվության պաշտպանությանը:

101. Փորձառության պաշտպանությունը կազմակերպվում է մեկ անգամ:

102. Համապատասխան հաշվետվությունը չպաշտպանելու դեպքում փորձառությունը գնահատվում է անբավարար:

103. Փորձառության գնահատման համար վերահանձնում չի կազմակերպվում:

104. Ուսանողի գիտելիքը ստուգվում է նաև կրթական ծրագրի ավարտական աշխատանքի բաղադրիչում:

105. Ավարտական աշխատանքը նախապատրաստվում և հրապարակային պաշտպանության է ներկայացվում ամփոփիչ ատեստավորման նպատակով:

1) Ուսանողն ընտրում է ավարտական աշխատանքի թեման՝ ամբիոնի կողմից նախապես հաստատված ավարտական աշխատանքների թեմաների ցանկից:

2) Ավարտական աշխատանքը նախապատրաստելու և հրապարակային պաշտպանության ներկայացնելու նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար նշանակվում է ղեկավար:

3) Ավարտական աշխատանքը ուսանողի կողմից նախապատրաստվում և հրապարակային պաշտպանության է ներկայացվում համալսարանում գործող «Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներ» փաստաթղթին համապատասխան:

106. Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունը տեղի է ունենում այդ նպատակով ձևավորված ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում:

107. Ավարտական աշխատանքի գնահատումն իրականացվում է 20 միավորային համակարգով:

108. Ավարտական աշխատանքի գնահատականը գրանցվում է սույն կարգի N 9 հավելվածում սահմանված ձևանմուշով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գրանցամատյանում:

109. Ավարտական աշխատանքը համարվում է չհանձնած, երբ ուսանողը սահմանված ժամկետում չի ներկայացրել ավարտական աշխատանք, և (կամ) սահմանված կարգին չհամապատասխանելու հիմքով ուսանողի ղեկավարը չի տվել ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանության երաշխավորություն, և (կամ) ուսանողը չի ներկայացել ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությանը և/կամ ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացել է անբավարար գնահատական:

110. Ավարտական աշխատանքի պաշտպանությունը կազմակերպվում է մեկ անգամ:

111. Ավարտական աշխատանքը չպաշտպանելու դեպքում ուսանողին չի տրվում բարձրագույն կրթության կրթական ծրագիրն ավարտած լինելը հավաստող պետական նմուշի դիպլոմ և կրթական ծրագրով նախատեսված բարձրագույն կրթության որակավորում:

112. Հաջորդող ուսումնական տարիներին ուսանողը կարող է կրկին նախապատրաստել և հրապարակային պաշտպանության ներկայացնել ավարտական աշխատանք՝ սահմանված ընտրված նոր թեմայով:

113. Ավարտական աշխատանքի նոր թեմա ստանալու համար ուսանողը դիմում է ներկայացնում ռեկտորի անունով ՄԿԾ-ով սահմանված ամփոփիչ ատեստավորումից առնվազն երկու կիսամյակ առաջ՝ կիսամյակը սկսելուց 15 օրվա ընթացքում:

VII. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

114. Հարգելի պատճառով գիտելիքի ստուգմանը չներկայացած ուսանողի համար կազմակերպվում է լրացուցիչ ստուգում:

115. Գիտելիքի ստուգմանը չներկայանալը հարգելի կարող է համարվել.

1) եթե ուսանողը կամ նրա ներկայացուցիչը մինչև ստուգման կազմակերպման աշխատանքային օրվա ավարտը չներկայանալու վերաբերյալ ընդհանուր բաժին դիմում է ներկայացրել ռեկտորի անունով,

2) ընդհանուր բաժնում նշում է կատարվել դիմումն ընդունելու օրվա վերաբերյալ,

3) տվյալ օրը կամ հետագայում դիմումին կցվել է քննությանը չներկայանալը հարգելի համարելու վերաբերյալ հիմնավորող փաստաթուղթ, որը ներկայացվում է համապատասխան ֆակուլտետի դեկանատ:

4) մանդատային հանձնաժողովի նիստում քննարկելով փաստաթղթերը, տվել է դրական եղրակացություն:

113. Գիտելիքի ստուգումներից հետո, մեկ շաբաթվա ընթացքում կազմվում է հարգելի պատճառով չներկայացած ուսանողների գիտելիքի լրացուցիչ կենտրոնացված ստուգումների կազմակերպման ժամանակացույց:

114. Հարգելի պատճառով չներկայացած ուսանողների գիտելիքի ստուգումները կազմակերպվում են ուղեգրերով՝ նախքան վերահանձնումները:

115. Եթե ուսանողի բացակայությունը տևական է ու հիմնավորված, և այդ պատճառով նա չի հասցնում քննաշրջանի ավարտից հետո առաջին շաբաթվա ընթացքում ներկայացնել փաստաթղթերը, ապա նրա՝ գիտելիքի ստուգման լրացուցիչ օր նշանակելու վերաբերյալ հարցը դեկանի ներկայացմամբ քննարկվում է ռեկտորատում:
116. Եթե ուսանողը բացակայում է նաև լրացուցիչ նշանակված օրը, ապա տվյալ ուսանողի համար նոր ստուգում չի կազմակերպվում, կամ բացառիկ դեպքերում դա կարող է իրականացվել ռեկտորատի որոշմամբ:
117. Քննություններին կամ ստուգարքներին ուսանողը պարտավոր է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով:
118. Վերահանձնումը կազմակերպվում է ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականի հիման վրա, այն դեպքում, երբ ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականը հավասար է «D»-ի քննության պարագայում կամ «U»-ի ստուգարքի պարագայում, այսինքն՝ թվային արժեքով փոքր է 8-ից (առանց կլորացման):
119. Չի սահմանափակվում այն առարկաների քանակը, որոնցից ուսանողը կարող է մասնակցել վերահանձնման:
120. Առաջին և երկրորդ վերահանձնումները կազմակերպելիս քննությամբ ավարտվող դասընթացների պարագայում ուսանողի գիտելիքները գնահատվում են 0-12 միավորով, իսկ ստուգարքով ավարտվող դասընթացների պարագայում՝ 0-20 միավորով:
121. Վերահանձնումների ժամանակ «անհատական աշխատանք» գործոնով ուսանողի ստացած գնահատականները պահպանվում են, և դրական գնահատական ստանալու համար անհրաժեշտ է ամփոփիչ վերահանձնման 12 միավորից հավաքել սահմանված անցողիկ շեմի պակասող միավորը:
122. Տվյալ դասընթացից վերահանձնման մասնակցած ուսանողների համար վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է անհատական աշխատանքի գործոնով գնահատականի և վերահանձնման գնահատականի հանրագումարով:

123. Դիպլոմի հավելված փոխանցվում է վերահանձնումից հետո ձևավորված վերջնական գնահատականը:
124. Կիսամյակի արդյունքներն ամփոփելուց հետո, նախքան վերահանձնումը դեկանատը ձևավորում է վերահանձնման թույլատրված ուսանողների ցանկը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:
125. Վերահանձնման մասնակցող ուսանողը, հաստատված ժամանակացույցին համապատասխան, կարող է երկրորդ անգամ վերահանձնել տվյալ դասընթացը, եթե առաջին անգամ չի հաղթահարել դրական գնահատականի շեմը: Այս դեպքում առաջին վերահանձնման արդյունքը չի գումարվում հաշվարկված գնահատականին:
126. Առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների ակադեմիական պարտքերի վերահանձնումը կազմակերպվում է յուրաքանչյուր կիսամյակի սկզբից, 4-6-րդ շաբաթների ընթացքում: 12 կրեդիտ ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների վերահանձնումների ժամանակ «անհատական աշխատանք» գործոնով ստացած գնահատականները չեն պահպանվում և դրական գնահատական ստանալու համար անհրաժեշտ է հավաքել սահմանված 20 միավորի 40%-ը:
127. Վերահանձնում ունեցող ուսանողները, անկախ ՄՈԳ-ից, չեն կարող օգտվել բուհի կողմից տրամադրվող ուսման վարձի զեղչերից:
128. Արգելվում է վերահանձնել ուսումնառության ընթացքում ստացած դրական գնահատականը:

VIII. ԴԱՍԸՆԹԱՑԻ (ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼԻ) ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

129. Քննաշրջանից հետո (նախքան վերահանձնումները) յուրաքանչյուր ուսանողի համար դեկանատում հաշվարկվում է տվյալ դասընթացի վերջնական գնահատականը՝ գործոնների գնահատականների և կշիռների հիման վրա: Հաշվարկը կատարվում է կշռված միջինի սկզբունքով՝ հետևյալ բանաձևով.

$$M=G1 X (K1/100) + G2 X (K2/100) + _____ + GnX (Kn/100)$$

որտեղ՝

M-ը վերջնական հաշվարկային գնահատականն է,

G1___Gn-ը 1-ից n-րդ գործոնների գնահատականներն են,

K1___Kn-ը 1-ից n-րդ գործոնների կշիռներն են:

130. Ինչպես քննությամբ, այնպես էլ ստուգարքով ավարտվող դասընթացների համար, հաշվարկային գնահատականը նույնացվում է գնահատականի տառային նիշով՝ կիրառելով համապատասխան աղյուսակները (հավելված N 4):

131. Տարբերակված գնահատականներով գնահատվող դասընթացների համար վերջնական հաշվարկային գնահատականի նիշերն են՝ A+, A, A-, B+, B, B-, C+, C, C-, D, իսկ ստուգարքով ավարտվող դասընթացների համար՝ S, U:

132. Ամփոփաթերթում գնահատականի բաղկացուցիչները դասախոսի կողմից նշվում են համապատասխան մասնաբաժիններով: Ամփոփաթերթում վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է գործոնի բաղկացուցիչների պարզ գումարի հիման վրա: Գործոնի բաղկացուցչի մեծությունը բնորոշվում է գործոնի կշռով (հավելվածներ NN 1-3, հավելված N 5):

IX. ԿՐԵԴԻՏ ՉՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՑՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

133. Ուսանողը չի ստանում կրթական ծրագրի որևէ բաղադրիչի համար նախատեսված կրեդիտը, եթե.

1) երկու վերահանձնումների արդյունքներով չի հաղթահարել որևէ դասընթացի դրական գնահատականի համար սույն կարգով սահմանված շեմերը,

2) սահմանված կարգով չի հանձնել փորձառությունը,

3) սահմանված կարգով չի գրել և պաշտպանել ավարտական աշխատանքը:

134. Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե ուսանողի ակադեմիական պարտքը գերազանցում է 12 կրեդիտը:

135. Փորձառությունից կրեդիտ չվաստակելու դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից:

X. ԴԵԿԱՆԱՏ-ԱՄԲԻՈՆ-ՈՒՍԱՆՈՂ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԸ

137. Դեկանատը՝

1) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից հաստատված՝ ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը (հավելված N 7), ինչպես նաև նյութերի ուղեցույց-փաթեթը հասանելի է դարձնում առաջին կուրսեցիներին,
2) իրականացնում է ուսանողների հաճախումների ընթացիկ հաշվառման վերահսկողությունը,
3) հաշվառում է ուսանողների ընդհանուր բացակայությունները, որի հետ կապված պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում ռեկտորատ,
4) ռեկտորատի հաստատմանն է ներկայացնում քննաշրջանի ժամանակացույցը,
5) ռեկտորատին է ներկայացնում քննություններին հարգելի պատճառով չներկայացած, վերականգնված և այլ բուհերից տեղափոխված այն ուսանողների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց համար ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի կողմից կազմակերպվում է գիտելիքի լրացուցիչ կենտրոնացված ստուգման և գնահատականների փոխանցման գործընթաց,
6) նախապատրաստում է ամփոփաթերթերը (հավելվածներ NN 1, 2, 3)՝ նախապես լրացնելով 1-ին, 2-րդ և 3-րդ սյունակները,
7) ամփոփիչ ստուգումներից հետո նախապատրաստում է ամփոփաթերթերը (հավելվածներ NN 1, 2, 3), հաշվարկում է ամփոփիչ գնահատականը՝ լրացնելով ձևաթերթերի համապատասխան սյունակները՝ այդ տվյալները հասանելի դարձնելով ուսանողներին,
8) հրապարակում և ռեկտորատ է ներկայացնում այն ուսանողների ցանկը, ովքեր ստացել են «D» կամ «U» գնահատական և թույլատրվել են վերահանձնումների,
9) հաստատված կանոնակարգով՝ համապատասխան կրեդիտներ չվաստակած ուսանողներին ներկայացնում է հեռացման:

10) կազմակերպում է ընտրովի դասընթացների ընտրության գործընթացը,

138. Ամբիոնը՝

1) կազմում և ուսանողին է ներկայացնում ուսումնառության անհատական ծրագիրը,

2) կազմակերպում է ավարտական աշխատանքների թեմաների ընտրության գործընթացը,

3) կազմում է կրեդիտային հենքով ուսումնական պլաններ՝ համաձայն հաստատված նորմատիվների,

4) կազմում է փորձառության ծրագրեր, նշանակում ուսանողի փորձառության ղեկավար ամբիոնի գիտամանկավարժական կազմից և հետևում փորձառության ընթացքին,

5) նախապատրաստում է անհատական կամ թիմային աշխատանքների թեմաների ցանկը,

6) պատասխանատու է գնահատման ամփոփաթերթերի ճիշտ լրացման և դեկանատ ժամանակին ներկայացման համար,

7) կազմում է ընտրովի դասընթացների համառոտագրերը և համապատասխան ժամկետներում դրանք ներկայացնում ուսանողներին,

8) ուսումնական պլաններում պարբերաբար թարմացնում է ընտրովի դասընթացների ցանկը,

9) կազմակերպում է ուսանողների արտալսարանային աշխատանքը՝ սահմանելով դասախոսների հերթապահություն,

10) ուսանողին տրամադրում է համապատասխան մեթոդական նյութեր, գրականության ցանկ՝ դասընթացը յուրացնելու համար,

11) կազմակերպում է անհատական խորհրդատվությունների հերթապահություն:

139. Ուսանողը՝

1) առաջին կուրսում, ուսումնառության սկզբում ծանոթանում է իրեն տրամադրված փաստաթղթերի փաթեթին, պայմանագրին և ստորագրում,

2) ծանոթանում է ամբիոնի կողմից ներկայացված ուսումնառության անհատական ծրագրին (հավելված N 7),

3) փորձառության ավարտից հետո ամբիոն է ներկայացնում փորձառության հաշվետվություն,
4) իրավունք ունի ստանալու տեղեկատվություն վերջնական հաշվարկային գնահատականի, հաշվարկի մեթոդաբանության և գնահատման առանձին գործոնների վերաբերյալ,
5) իրավունք ունի ստանալու տեղեկատվություն վերահանձնման թույլատրված ուսանողների վերաբերյալ,
6) ստուգմանը հարգելի պատճառով չներկայանալու դեպքում, լրացուցիչ ստուգմանը մասնակցելու նպատակով ներկայացնում է բացակայության հետ կապված համապատասխան հիմնավորում:

XI. ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

140. Կրթական ծրագիրը իրացնող ամբիոնները կազմում են ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը (հատուկ ձևաթերթի միջոցով) (հավելված N 7), որը ներառում է բակալավրիատի բոլոր կիսամյակների ընթացքում առաջադրված դասընթացները (հավելված N 8): Յուրաքանչյուր առարկայի համար նշվում է համապատասխան կրեդիտը: Նորմատիվային բազայի համաձայն՝ յուրաքանչյուր կիսամյակի գումարային կրեդիտների քանակը պետք է լինի 24, տասը կիսամյակների ընթացքում՝ 240: Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը պետք է համապատասխանի ակադեմիական կրեդիտների բաշխման ներբուհական նորմատիվներին, որոնք հաստատվել են համալսարանի գիտական խորհրդի կողմից: Անհատական ծրագրի մեջ արտահայտվում են ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացների ցանկը՝ ըստ կիսամյակների:
141. Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիրը կարող է ուսումնառության ընթացքում փոփոխությունների ենթարկվել՝ բավարար հիմնավորումների ներկայացման դեպքում:

XII. ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

142. Ուսանողի ակադեմիական առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացվում են նրա ակադեմիական տեղեկագրում (հավելված N 6): Ակադեմիական տեղեկագիրը կարող է կազմվել ինչպես առանձին կիսամյակի կամ ուսումնական տարվա համար, այնպես էլ՝ լինել ամփոփիչ: Ակադեմիական տեղեկագիրը պարունակում է միջազգայնորեն ընդունված հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝ գումարային կրեդիտներ, գնահատված կրեդիտներ, վարկանիշային միավորներ և միջին որակական գնահատական (ՄՈԳ)F[1]F:

1) Գումարային կրեդիտը բոլոր դասընթացների և ուսումնական մոդուլների կրեդիտների գումարն է: Գումարային կրեդիտը ներառում է տվյալ կրթական ծրագրի համար նախատեսված բոլոր այն ուսումնական մոդուլները, որոնք գնահատված են A+ -ից մինչև C- կամ S: Գումարային կրեդիտները հաշվելիս բացառվում են այն դասընթացները կամ մոդուլները, որոնցից ուսանողը գնահատվել է անբավարար (D կամ U):

2) Գնահատված կրեդիտը (պարզ գումարով արտահայտված) տվյալ կրթական ծրագրի բոլոր այն դասընթացների կամ ուսումնական մոդուլների կրեդիտներն են, որոնք գնահատվում են տարբերակված գնահատականներով (գնահատվում են միայն (A+, A, A- , B+, B, B- կամ C+, C, C-), այսինքն՝ այս ցուցանիշը պարունակում է գումարային կրեդիտների մի մասը:

3) Ակադեմիական տեղեկագրում տառային գնահատականները նույնացվում են համարժեք թվային միավորներով՝ գնահատականների աղյուսակի հիման վրա (հավելված N 4): Որևէ դասընթացի (կամ կրթական մոդուլի) վարկանիշային միավորը (ՎՄ) որոշվում է տվյալ դասընթացի համար սահմանված կրեդիտների և ուսանողի ստացած գնահատականի արտադրյալով (օրինակ՝ եթե 4 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է B (77), ապա տվյալ դասընթացի ՎՄ-ը հավասար է 4 կրեդիտ X 77, այսինքն՝

[1] Ներկայացված ցուցանիշները նկարագրված են նաև նախարարության կողմից հաստատված օրինակելի կարգում:

308 վարկանիշային միավոր 400 հնարավորից): Վարկանիշային միավորը բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարն է:

Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\text{վարկանիշային միավորը} = \sum_{i=1}^{k} (C_i \times X_i),$$

որտեղ՝

X_i-ն i ուսումնական մոդուլի գնահատականի թվային արժեքն է,

C_i-ն՝ i ուսումնական մոդուլի կրեդիտը,

իսկ k-ն՝ ուսումնական մոդուլների քանակը:

4) Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ընդհանրացված ցուցանիշ է, որը ներկայացնում է ուսանողի ընդհանուր առաջադիմությունը: Այս ցուցանիշը հնարավորություն է տալիս ըստ առաջադիմության տարբերակելու նույն քանակի կրեդիտներ վաստակած ուսանողներին:

5) ՄՈԳ-ը արտացոլում է տվյալ կրթական ծրագրի բոլոր այն դասընթացների կամ ուսումնական մոդուլների կրեդիտները, որոնք ավարտվում են քննությամբ և գնահատվում են A, B կամ C տառային գնահատականներով:

143. ՄՈԳ-ը հաշվարկվում է վարկանիշային միավորների և գնահատված կրեդիտների հարաբերությամբ.

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{Վարկանշային միավոր}}{\text{Գնահատված կրեդիտներ}}$$

1) Հաշվարկի արդյունքները ներկայացվում են մինչև 0,01-ի ճշտությամբ: Տարբերակվում են կիսամյակային (հաշվարկվում է առանձին կիսամյակի համար), տարեկան և ամփոփիչ (հաշվարկվում է մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը) ՄՈԳ-եր:

2) Համալսարանում ՄՈԳ-ի նվազագույն սահմանը 8,0 է, որը պահանջվում է բավարար առաջադիմություն գրանցելու համար:

3) Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ ՄՈԳ-ի շեմը կարող է բարձրացվել:

Հավելված N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՎՈՂ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ N _____

20 / 20 ուսումնական տարվա _____ կիսամյակ
Ֆակուլտետը _____
Մասնագիտության/կրթական ծրագրի ծածկագիրը և անվանումը _____ կուրսը _____
Առարկան _____ ընդամենը լսարանային ժամեր _____ , կրեդիտը _____
Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը _____
Անցկացման ժամկետները Ամփոփիչ քննություն _____ 1-ին վերահանձնում _____ 2-րդ վերահանձնում _____

N	Ազգանուն, անուն, հայրանուն	ուսուցման վերջնական ընդհանուր միավորը	անհատական աշխատանքի գնահատականը (0-8)	ամփոփիչ քննության առավելագույն միավորը (0-12)	Վերջնական գնահատական			Վերահանձնում					
					թվային արժեքը (միայն 4+5)	տառային նիշը	դասախոսի ստորագրությունը	1-ին վերահանձնում (0-12)	1-ին վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+9)	դասախոսի ստորագրությունը	2-րդ վերահանձնում (0-12)	2-րդ վերահանձնումից հետո հաշվարկված գնահատականը (4+12)	դասախոսի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.													
2.													
3.													
4.													
5.													
Դասախոսի ստորագրություն													

Դեկան՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ
ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՍՏՈՒԳԱՐՔՈՎ ԱՎԱՐՏՎՈՂ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ N _____

20 / 20 ուսումնական տարվա _____ կիսամյակ
Ֆակուլտետը _____
Մասնագիտության /կրթական ծրագրի ծածկագիրը և անվանումը _____ կուրսը _____
Առարկան _____ ընդամենը լսարանային ժամեր _____ , կրեդիտը _____
Դասախոսի ազգանունը, անունը, հայրանունը _____
Անցկացման ժամկետները Ամփոփիչ քննություն _____ 1-ին վերահանձնում _____ 2-րդ վերահանձնում _____

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Ստուգման գրքույկի համարը	Ամփոփիչ ստուգման արդյունքը (0-20)	Տառային նիշը	Դասախոսի ստորագրությունը	Վերահանձնում			
						1-ին վերահանձնում (0-20)	Դասախոսի ստորագրությունը	2-րդ վերահանձնում (0-20)	Դասախոսի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
Դասախոսի ստորագրություն									

Դեկան՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

20 / 20 ուսումնական տարվա _____ կիսամյակ

Ֆակուլտետը _____

Մասնագիտության /կրթական ծրագրի ծածկագիրը և անվանումը _____ կուրսը ____

Անցկացման ժամկետները Փորձառության սկիզբ _____ Փորձառության ավարտ _____

N	Ազգանուն, անուն, հայրանուն	ստուգման գրքույկի համարը	Հաճախումների % -ը	Հաճախումների գնահատականը ((0-4) կրուն 4* 0.15)	Ամբիոնի ղեկավարի գնահատականը (0-4)	Հաշվետվության պաշտպանությունը (0-12)	Վերջնական գնահատական		Ամբիոնի նիստում ստորագրությունը
							Թվային արժեքը (կրուն 5+6+7)	Տառային նիշը	
1	2	3	4	5	6	7	8	9	10

Դեկան՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված N 4

Տարբերակված գնահատման սանդղակ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 100 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 20 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՏԱՌԱՅԻՆ ՆԻՇԸ
գերազանց	96-100	19,01-20	A+
գերազանց	91-95	18,01-19,0	A
գերազանց	86-90	17,01-18,0	A-
լավ	81-85	16,01-17,0	B+
լավ	76-80	15,01-16,0	B
լավ	71-75	14,01-15,0	B-
բավարար	66-70	13,01-14,0	C+
բավարար	61-65	12,01-13,0	C
բավարար	40-60	8,0-12,0	C-
անբավարար	փոքր է 40-ից (առանց կլորացման)	փոքր է 8-ից (առանց կլորացման)	D

Ստուգարքով գնահատման սանդղակ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 20 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՏԱՌԱՅԻՆ ՆԻՇԸ**
ստուգված	8,0-20	S
չստուգված	փոքր է 8-ից (առանց կլորացման)	U

Հավելված N 5

Հեռակա ուսուցման բակալավրիատի բազմագործոնային գնահատման համակարգի գործոնների կշիռները

	ԳՈՐԾՈՆ **քննությամբ ավարտվող դասընթացների համար**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**
1.	ուսանողի անհատական աշխատանք	0-8
2.	քննություն	0-12

	ԳՈՐԾՈՆ **ստուգարքով ավարտվող դասընթացների համար**	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**
2.	ստուգում	0-20

	ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՆ	**ԳՆԱՀԱՏԱԿԱՆ**
1.	հաճախումներ	0-4
2.	ամբիոնի ղեկավարի գնահատական	0-4
3.	փորձառության հաշվետվության պաշտպանություն	0-12

Հավելված N 6

Ուսանողի ակադեմիական տեղեկագրի նմուշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տրման ամսաթիվ _____

Մասնագիտությունը և մասնագիտացումը	**Որակավորման աստիճանը**
«_____»	

———- կիսամյակ, 20 ____

	Դասընթացի անվանումը	**Ժամերի ընդհանուր քանակը**	**Կրեդիտը**	**Գնահատականը** 20 **միավորային համակարգում**	**Գնահա-տականի տառային նիշը**
1.					
2.					
3.					
4.					
5.					
6.					
7.					
8.					
9.					
10.					
11.					
12.					
13.					
14,					
15.					

Գումարային կրեդիտը	**Գնահատված կրեդիտը**	**Վարկանիշային միավորը**	**ՄՈԳ**

———- կիսամյակից հետո կուտակված արդյունքները, 20 _____

Գումարային կրեդիտը	**Գնահատված կրեդիտը**	**Վարկանիշային միավորը**	**ՄՈԳ**

Դեկան՝ _____ Ուս. աշխ. գծով պրոռեկտոր՝ _____

Անվավեր է առանց համալսարանի կնիքի

Հավելված N 7

Ուսանողի ուսումնառության անհատական ծրագիր

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ուսումնական աշխատանքների գծով
պրոռեկտոր
_____ _____ 20 _____ **թ.**

ՀՊՏՀ հեռակա ուսուցման բակալավրի ուսումնառության անհատական ծրագիր
(կրթական մոդուլների կառուցվածքը և կրեդիտների բաշխումն ըստ կիսամյակների)

Ամբիոն

Ֆակուլտետ

Թվանիշ	**Դասընթաց / Կիսամյակ**	**Կրեդիտ**	I	II	III	IV	V	VI	VII	VIII
Ընդհանրական դասընթացներ		0	0	0	0	0	0	0	0	0
Մասնագիտական դասընթացներ		0	0	0	0	0	0	0	0	0
Ընտրովի դասընթացներ		0	0	0	0	0	0	0	0	0
Հետազոտական կրթամաս (փորձառություն և ավարտական աշխատանք)		0	0	0	0	0	0	0	0	0
Ուսումնառության արդյունքում՝			0	0	0	0	0	0	0	0

Ամբիոնի վարիչ՝ _____ Ֆակուլտետի դեկան՝ _____

Հավելված N 8

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ



Հավելված N 9

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

«_____» մասնագիտության

«_____» կրթական ծրագրի հեռակա ուսուցման

բակալավրիատի 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների պաշտպանության

ամփոփիչ հանձնաժողովի գնահատման թերթիկ

N	Ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը	Ավարտական աշխատանքի թեմայի վերնագիրը	Գնահատման գործոնների կշիռը* (միավոր)			
			I	II	III	IV

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամ՝

* Ծանոթություն:

I. աշխատանքի բովանդակությունը, 15 %
II. աշխատանքի ինքնուրույնության աստիճանը, 15 %
III. աշխատանքի ներկայացման որակը, 35 %
IV. տրված հարցերի և դիտողությունների պատասխանների ամբողջականությունը և խորությունը, 35 %

Հավելված N 10

Բողոքարկման թերթիկի օրինակելի ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ֆակուլտետը
_____
Մասնագիտությունը
_____
Կուրսը _____
Խումբը _____
Ուսանողը
_____
Առարկան _____ գնահատող դասախոսը
_____
Գնահատականը (տառերով և թվերով)
_____
Բացատրությունը բողոքի վերաբերյալ
_____
_____
_____
_____
_____
____

Բողոքարկման ամսաթիվը _____

Ուսանողի ստորագրություն _____
Ամսաթիվ _____